Գործարքների չեղարկման և գումարների վերադարձի քաղաքականություն

1. Ծառայության մատուցում

- BusinesStart առցանց տեղեկատվական հարթակը (այսուհետ՝ BusinesStart) մատուցում է թվային ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն) (օնլայն ուղեցույցներ, գործիքներ, հաշվիչներ բաժանորդագրություն):
- BusinesStart-ի բովանդակությունը հասանելի կդառնա 2025թ. Նոյեմբերի 1-ին:
- Ծառայությունն ակտիվանում է 2025թ. Նոյեմբերի 1-ին կամ այդ ամսաթվից հետո BusinesStart-ում գրանցումը հաստատելուց և վճարում իրականացնելուց անմիջապես վճարումից հետո՝ օգտատիրոջը տրամադրելով մուտք հարթակի բոլոր հասանելի բաժիններին՝ 1 օրացուցային տարվա ընթացքում:

2. Գործարքի չեղարկում

- Քանի որ Ծառայությունը համարվում է **թվային և անմիջապես մատուցվող**, գործարքի չեղարկման հնարավորությունը սահմանափակ է:
- Եթե վճարումը կատարվել է, բայց Ծառայությունը **չի ակտիվացվել տեխնիկական կամ Ծառայությունը մատուցողի սխալի պատճառով**, գործարքը համարվում է չեղարկված, և գումարը վերադարձվում է օգտատիրոջը ամբողջությամբ:
- BusinesStart-ը իրավունք ունի մերժելու գումարի վերադարձը, եթե պարզվի, որ օգտատերը **դիտավորությամբ չարաշահել է ծառայությունը** կամ խախտել է օգտագործման կանոնները:

3. Օգտատիրոջ կողմից հրաժարում Ծառայությունից

- Օգտատերը կարող է հրաժարվել Ծառայությունից 14 օրվա ընթացքում միայն այն դեպքում, եթե նա **չի օգտվել բաժանորդագրությունից (չի մուտք գործել իր անձնական էջ, չի դիտել բովանդակություն, չի ներբեռնել որևէ նյութ):**
- Եթե օգտատերը արդեն մուտք է գործել համակարգ և օգտվել Ծառայությունից, ապա գումարի վերադարձ **չի իրականացվում**:

4. Գումարների վերադարձի ժամկետներ և ձևաչափ

- Վերադարձը կատարվում է նույն եղանակով, որով կատարվել է վճարումը (բանկային քարտ, փոխանցում և այլն):
- Գումարի վերադարձի ժամկետը կազմում է մինչև **10 աշխատանքային օր**: